

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԾՈՒՍԱ. ԵԿԵՂԵՑԻ

Քրիստոնեաները ծանկաստանում, Դեռ ևս անցեայ յունիս ամսից սկսած Ռուսաց «Եկեղեցական Համբաւարեր» չարաթաթերթը ուժեղ թափով բողոքում է Տաճիկ կառավարութեան հալածանքների դէմ, որ սկսել է քրիստոնեայ ժողովրդոց և նոցա հաստատութիւնների դէմ վաղուց է որ Տաճիկ կառավարութիւնը ամեն միջոցի դիմում է հեռացնել իւր երկրից քրիստոնեաններին, որոնք պատկանում են այս կամ այն ուժեղ ազգութեանը՝ ենթարկում են հալածանքների միայն հեռացնելով նրանց, իսկ որոնք զուրկ են ցեղակից ուժեղ պետութիւնից՝ ենթարկեում են ոչ միայն հալածանքների, այլ և պարբերաբար ոչնչացման: Տիեզերական Պատրիարքն առանձին ուշադրութիւն է դարձել և հովանաւորել հալածուած քրիստոնեաններին: Մօտիկ անցեալում Հերման Ե-րդ Պատրիարքը առանձին բողոքով դիմել է Տաճկաց Սուլթանին և խնդրել վերացնել քրիստոնեանների մասնակութիւնը՝ Տիեզերական Պատրիարքը մանրամասն մէջ է բերում և բողոքում քրիստոնեանների դէմ եղած անգթութիւնները ու հալածանքները՝ մասնաւանդ Թրակիայում: Յիշեցնում է՝ որ Ֆադիշան Արդուլ Մեծիտը հրատարակելով 1856 թուին Հաթթը-Հիւմայիւնը՝ գրաւել է իւր հպատակների սէրն ու հաւատարմութիւնը, յարդանքը Եւրոպայի, որը՝ այդ օրէնսդրութեան մեծ նշանակութիւն տալով՝ Փարիզի դաշնազրով ճանաչեց Տաճկաց պետութիւնը ի թիւս Եւրոպական միւս պետութեանց: Հաթթը-Հիւմայիւնը պարունակում է իւր մէջ մի շարք ներքին բարենորոգութիւններ, որոնցով միանգամայն ապահովուած են քրիստոնեայ ժողովրդոց կեանքը, գոյքը և պատիւը իսկ այժմ դժբախտաբար Սուլթան Արդուլ Մեծիդի հաստատած օրէնքները անտես են առնւում և Տաճիկ պետութիւնը խիստ հալածանք է սկսել քրիստոնեայ ժողովրդոց դէմ, բոյկոտի ենթարկելով յոյների վաճառականութիւնը, ծանր հարկեր դնում նրանց ապրանքների վրայ, հալածում և կողոպտում: Առանձնապէս ծանր կերպով հալածում են Թրակիայի քրիստոնեաններին, որտեղ նրանց հեռացնում են իրենց օջախից, զրկում ունեցուածքից և մահուան սպառնալիքով ոտիպում են գաղթել ուրիշ երկրներ:

Դժբախտաբար Հերման Ե-ի խիստ բողոքները մինչև այժմ էլ Ֆլացին առանց հետեանքի Բնդհակառակը քրիստոնեանների դէմ եղած հալածանքը Թրակիայից անցաւ նաև Փոքր Ասիա, որտեղ

Նոյնպէս քրիստոնեաներն Անթարկւում են ամենածանր հալածանքի Ամենից շատ վեասուել են Զմիւռնայի վիլայէթի յոյները։ Տիեզերական Պատրիարքը տեսնելով որ Տաճիկ կառավարութեան կողմից ոչ մի կարգադրութիւն չէ լինում վերջ դնելու քրիստոնեաների դէմ եղած հալածանքներին՝ ինքը և Սինօքը հրատարակում են շրջաբերական թուղթ բոլոր միտրապօլիսների անունով փակել իրենց բոլոր տաճարները և ուսումնարանները ամբողջ կայսրութեան մէջ, որովհետեւ Յունական եկեղեցին գտնուում է անտանելի հալածանքի մէջ։ Պատրիարքի այս կարգադրութիւնը ամեն տեղ թողել է ուժեղ տպաւորութիւն։

Լրագիրները հազորդում են՝ որ հաւանականօքն կարող է պատերազմ ծագել Տաճկաստանի և Յունաստանի մէջ, որովհետև վերջինս չէ կարող այլ ևս տանել այն բռնութիւնները՝ որ Տաճիկ կառավարութիւնը ցոյց է տալիս քրիստոնեաների դէմ։

Պատրիարքը, ինչպէս տուում են հաւանականաբար, ուղարկել է Խուսաստան առանձին պատգամաւորութիւն, որ վերջինս Խուսաց կառավարութեան առաջ պարզի այն բոլոր դժբախտ կացութիւնը, որի մէջ ապրում է քրիստոնեայ ժողովուրդը, համոզելով նաև որ միանգամայն իրականութեան մէջ ոչ մի նշանակութիւն չէ ունենում այն բոլոր կարգադրութիւնները, որ Տաճիկ կառավարութիւնը իրեն թէ անում է քրիստոնեաների դէմ եղած որ և է դժբախտութեան առաջն առնելու։

«Եկեղեցական Համբաւաբեր» շաբաթաթերթի խմբագրութեան հարկաւ շատ քիչ է յայտնի և այն հալածանքների ու կոտորածների մասին։ Որոնց ենթակայ է Տաճկաստանում հայ բազմատանջ ժողովուրդը դարեր շարունակի Այն սարսափը՝ որ տեսնում են յոյների դէմ եղած հալածանքի մէջ, մի չնչին բան է այն դարաւոր հալածանքների սարսափի համեմատութեամբ, որ կրել են և մինչև այժմ էլ կրում են Տաճկահայերը։ Հայոց Պատրիարքները ամեն միջոցի դիմել են՝ Եկեղեցիներ, դպրոցներ փակել, իրեն ցոյց, գեսպանների և պետութիւնների դռները մաշել՝ բայց հայերի դրութիւնը նոյնն է մնացել, դուցէ և աւելի վատթար։ Ինչ որ դարեր շարունակ։

Այս բոլոր շարիքների առաջն առնելու համար «Եկեղեցական Համբաւաբեր» խմբագրութեան կարող ենք ցոյց տալ այն գեղեցիկ միջոցը՝ ինչ որ Լազարեան ճեմարանի պրօֆեսոր Ա. Կրիմսկի առաջարկում է իւր Ամանմեղական աշխարհն ու նրա ապագան, զրքի մէջ հետեւեալ մտքով։ «Անհրաժեշ և ոչնչացնել Տաճկաստանի ինքնուրոյն զոյութիւնը, Նկատուած է՝ որ թուրքերն անվնաս են դառնում և նրանց քաղաքակրթուելն աւելի յաջող է գնում այն ժամանակ, երբ նրանք ընկնում են և լրոպական իշխանութեան

ներքոյ,.... Թուրքը վայելով կազազ կեանք և մուսաստանի կուլ-
տուրայի բարիքները՝ ապրում է չատ լաւ. քիչ առ քիչ համակեր-
պւում է ուստաց պիտութեան հետ՝ և յաճախակի պատահում են
որ մուսաստանի թուրքերն ուխտազնացութեան զնալով Մէկկա,
այնտեղ իրենց բարեկեցիկ դրութեամբ շարժում են իրենց հաւա-
տակիցների և ցեղակիցների նախանձր.... Քանի որ իշխանութիւնը
կը գտնուի թուրք կառավարութեան և թուրք աստիճանաւորների
ձեռքում, քանի որ Թուրքն իւր պետութեան ինքնուրոյն զոյու-
թեան մէջ իւր անտանելի անչարժութեան պաշտպանութիւնը կը
գտնի՝ թուրքիան իւր նախկին զրութեան մէջ կը մնայ և կը լինի
յառաջադիմութեան խանդարիչ ոյժ. Բայց որովհետեւ տանիկ իշխան
ուղղակի կրօնական պարտականութիւն և համարում ատել օւրա-
գաւաններին՝ ուսի թուրքիայի ինքնուրոյն զոյութիւնը շարի ադ-
րիւր և ներկայացնում իրեն սուրադրեալ երիտոննեաների համար:*)

Պարզ է ուրեմն՝ քանի զոյութիւն ունի ինքնուրոյն Տաճկաս-
տան՝ այդ պետութեան մէջ ապրող քրիստոնեաներն էլ շարունակ
կենթարկուին հալածանքին. Պէտք է ուրեմն սչնչացը Տաճկաստանի
ինքնուրոյնութիւնը և արեւելքի քրիստոնեաների հզօր պաշտպան
Մեծն մուսաստանի գերիշխանութիւնը տարածուի Տաճկաստանում,
որպէս զի քրիստոնեաները տեսնեն իրենց կեանքի, գոյքի և պատուի
ապահովութիւնը:

Ա. Գ. Լ. Ի. Կ. Ա. Ն. Ե Կ Ե Պ Ե Ց Ի.

Ամերիկական բարձրագոյն դպրոցը Բեյրութում. Արեւելքում
սակաւաթիւ բարձրագոյն դպրոցներից մէկն է համարւում Բէյրու-
թում զոյութիւն ունեցող Ամերիկական բարձրագոյն դպրոցը, որ
կէս զարիդ աւելի զոյութիւն ունի և այդ ժամանակի ընթացքում
ունեցել է տեղացիներից մեծ քանակութեամբ աշակերտներ: Այդ
բարձրագոյն դպրոցն աւարտողների մէջ աչքի են ընկնում դիտնա-
կաններ, բժիշկներ, գրողներ, վաճառականներ, կալուածատէրեր,
կառավարչական աստիճանաւորներ, որոնք տարածուած են Ասորի-
քում, Եգիպտոսում, Եւրոպայում, Ամերիկայում, Աւստրալիայում
և այլ լուսաւոր երկրներում: Բէյրութի ամերիկական դպրոցը սկսել
է իւր գործունէութիւնը 1866 թուբն: Ակղքներում ունեցել է 16
աշակերտ, որոնցից աւարտել են միայն 8 հոգի: Ներկայումս սովո-
րում են այնտեղ մինչեւ հազար հոգի: Աւարտել են այդ բարձրա-

*) Տես Ա. Կրիմսկու «Մահմեդական աշխարհն ու նրա ապագան»
գիրքը էջ 462—65, Բարգրանութիւն Բարգէն վարդապետի, Աաղարշ-
պատ 4906 թ.